

«ԱՆՀՈԳ ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆ, ԱՊԱՀՈՎ ԾԵՐՈՒԹՅՈՒՆ»
 ԾՐԱԳԻՐ

1	Ծրագրի նպատակը	<p>1. Տիրամայր Հայաստանի կուսաստանի Պողոսյան կրթահամալիրում անվճար պահել և դաստիարակել 3-18 տարեկան միակողմանի և երկկողմանի ծնողազուրկ 60 երեխաների ու պատանիների Հայաստանի բոլոր մարզերից, անկախ նրանց կրոնական պատկանելիությունից: Երեխաները հաճախում են պետական դպրոցներ, ապա վերադառնում են կրթահամալիր:</p> <p>2. Տիրամայր Հայաստանի կուսաստանի Ծերերի ցերեկային խնամքի կենտրոնում աջակցել աղքատության մեջ գտնվող սոցիալապես անապահով ընտանիքներին, միայնակ և կարիքավոր ծերերին:</p>
2	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Ծրագրի շրջանակներում օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3	Բարեգործը	<p>«Պողոսյան» հիմնադրամ (Avenue Franklin Roosevelt 67 B - 1050 Bruxelles, Belgium) – տարեկան 12,500,000 դրամ</p> <p>Ռեյմոն Կոյումջյան (Kobe Port P.O. Box 531,4-11 Kotonoo-CHO 2-Chome, Chuo-Ku Kobe-Japan) – տարեկան 10,000,000 դրամ</p> <p>«Օվդը ԴՕրիան» բարեգործական կազմակերպություն (3 avenue de la Gare, 35600 Redon, France) – տարեկան 10,000,000 դրամ</p> <p>«Քսեվա Քանադա» բարեգործական կազմակերպություն (1247 Kilborn Place, Ottawa, Ontario K1H 6K9, Canada) – տարեկան 10,000,000 դրամ</p> <p>«Ասոսասիոն Այյանս Արմենիեն» բարեգործական կազմակերպություն (10B Rue Thouin 3, Paris, France) – տարեկան 8,700,000 դրամ</p> <p>«Միսիոն Անֆանս» բարեգործական կազմակերպություն (19 Avenue Des Papalins, Monaco) – տարեկան 2,600,000 դրամ</p>

		<p>«Ծնողագուրկ հայ երեխաների օգնության միություն (ՍՈԱԲ)» բարեգործական կազմակերպություն (1060 First Avenue, Suite 400 King of Prussia, PA 19406, USA) – տարեկան 15,000,000 դրամ</p> <p>ԱՄՆ հայ համայնք (Inc 1587 Palmer Springfield, PA, USE) – տարեկան 10,000,000 դրամ</p> <p>Փիթր Ոսբիկիան (408 Pond View Drive Mooresroun, NJ 08057, USA) – տարեկան 10,000,000 դրամ</p> <p>Աննա Կազանյան (25 Allegra CT White Plains, NY, USA) – տարեկան 12,000,000 դրամ</p> <p>Վալերի Աուբերսոն (2 Via Castagnone, Sul Naviglio 20063, Italy) – տարեկան 3,000,000 դրամ</p> <p>Մարլեն Երևանյան (18933 La Montana Place Tarzana, CA 91396, USA) – տարեկան 2,000,000 դրամ</p> <p>«Ֆորուս ին չիլդրեն նաու» հիմնադրամ (17412 Ventura Blvd #689 Encino, CA 91316 - USA) – տարեկան 7,000,000 դրամ</p>
4	Ծրագիրը կատարողը	Տիրամայր Հայաստանի կուսաստան» բարեգործական կազմակերպության (հասցե՝ Գյումրի, Ե. Չարենցի 6, ՀՎՀՀ 05513266):
5	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Ծրագիրն իրականացվելու է ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաք Ե. Չարենցի 6 հասցեում: Բնագավառը՝ կրթական և սոցիալական:
6	Ծրագրի բյուջեն	Ծրագրի բյուջեն է 338,400,000 դրամ:
7	Բարեգործություն ստացողը	<ul style="list-style-type: none"> - Տիրամայր Հայաստանի կուսաստանի «Պողոսյան կրթահամալիր» հաճախող 3-18-ից տարիքի մոտ 60 երեխաներ ու պատանիներ, ովքեր ապրում են սոցիալական ծայրահեղ դժվարություններ ունեցող ընտանիքներում կամ միակողմանի և երկկողմանի ծնողագուրկ են: - Տիրամայր Հայաստանի Կուսաստանի «Ծերերի ցերեկային խնամքի» կենտրոն հաճախող մոտ 50 միայնակ ծերեր: - Հայաստանի բոլոր մարզերի, անապահով ընտանիքները, որոնց ցուցակները կազմվել են տեղական ինքնակառավարման մարմինների հետ միասին՝ ընտանիքների սոցիալական նկարագրերի մանրամասն ուսումնասիրությունների հիման վրա: <p>Ընդհանուր առմամբ, ծրագրի շահառուներ են հանդիսանում 1000-ից ավելի ընտանիքներ:</p>
8	Ծրագրի իրականացման տևողությունը	2022 թվականի հունվարի 1-ից մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ը:

9	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	<ul style="list-style-type: none"> • Շենքի շահագործման և կոմունալ-կենցաղային ծախսեր – տարեկան 57,000,000 դրամ և 171,000,000 դրամ 3 տարվա համար, • Երեխաներին և ծերերին վիտամիններով և հանքային նյութերով հարուստ տաք սննդի մատուցում օրը 3 անգամ: Տարեկան սննդի ծախսը կազմում է 20,000,000 դրամ և 60,000,000 դրամ 3 տարվա համար: • Դպրոցահասակ երեխաների դպրոցական տնային պարապմունքների կազմակերպում դպրոցից հետո: Երեխաներին գրենական պիտույքների, ուսումնական նյութերի պայուսակների ապահովում: Տարեկան գրենական պիտույքների ծախսը կազմում է 1,100,000 դրամ և 3,300,000 դրամ 3 տարվա համար: • Երեխաների բնականոն կենցաղի ապահովման համար անհրաժեշտ տնտեսական պարագաներ - տարեկան 1,700,000 դրամ և 5,100,000 դրամ 3 տարվա համար: • Կենտրոնի գործունեության, ինչպես նաև անապահով ընտանիքներին բաժանելու համար բարեգործական բեռների ներմուծում-տարեկան 30,000,000 դրամ և 90,000,000 դրամ 3 տարվա համար: • Ծրագրային և ֆինանսական աուդիտի իրականացման ծախսեր – տարեկան 3,000,000 դրամ և 9,000,000 դրամ 3 տարվա համար:
10	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	<p>Այս ծրագրի շրջանակներում ծախսվում է՝</p> <ul style="list-style-type: none"> -տարեկան 4,000,000 դրամ էլեկտրականության համար և 12,000,000 դրամ 3 տարվա համար, -տարեկան 1,000,000 դրամ ջրամատակարարման և ջրահեռացման համար և 3,000,000 դրամ 3 տարվա համար, -տարեկան 500,000 դրամ հեռախոսակապի, ինտերնետի և բջջային հեռախոսակապի համար և 1,500,000 դրամ երեք տարվա համար, -տարեկան 11,000,000 դրամ գազի համար և 33,000,000 դրամ երեք տարվա համար, -տարեկան 40,500,000 դրամ շենքերի և տարածքի վերանորոգման համար և 121,500,000 դրամ երեք տարվա համար, -տարեկան 20,000,000 դրամ սննդի համար և 60,000,000 դրամ երեք տարվա համար, -տարեկան 1,100,000 դրամ գրենական պիտույքների համար և 3,300,000 դրամ երեք տարվա համար, -տարեկան 1,700,000 դրամ տնտեսական ապրանքների և գրենական պիտույքների համար և 5,100,000 դրամ երեք տարվա համար,

		-տարեկան 30,000,000 դրամ բարեգործական բեռների ներմուծման համար և 90,000,000 դրամ երեք տարվա համար, -տարեկան 3,000,000 դրամ կազմակերպության ֆինանսական և ծրագրային աուդիտի իրականացման համար և 9,000,000 դրամ 3 տարվա համար,
11	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Ծրագրի իրականացման հետ կապված ծախսեր այս ծրագրում չեն նախատեսված, քանի որ կազմակերպությունը վարչական և կազմակերպական ծախսերի համար ունի առանձին ֆինանսավորում:
12	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և այլ մարմինների հետ	Ծրագրի իրականացման ընթացքում կազմակերպությունը համագործակցում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, Միասնական սոցալական ծառայության, Շիրակի մարզպետարանի, ինչպես նաև՝ Գյումրու քաղաքապետարանի հետ:
13	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հիմնական վերահսկողությունը կիրականացվի ֆինանսավորող բարերարների կողմից: Այդ նպատակով նրանք կներգրավեն ներքին խորհրդատուների, տեղական և միջազգային աուդիտորների: Ինչպես նաև՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ